

- 11 Երուսաղէմի ճրգնօղ Պատրիարգ,
Գրիգոր Վարդապետ՝ յաւէտ մեծայարգ,
Առ ծախուց վիճիս՝ յիւր վիզ շրջլծայս արկ,
Զոր բարձին անտի՝ ապայ Բարերարք:
- 12 Այլ թողեալ զայս վէպ՝ այսպէս ընդ աղօտ,
Պատմեցից աստէն զայլ իմն համառօտ,
Որում պատմութիւնս՝ թէ եւ կարճառօտ,
Այլ ըստ պատշաճին է իբրու կարօտ:
- 13 Յաւուրնն յայնոսիկ ոմանք ի խռովւաց,
Առանց բանաւոր ինչ պատճառաց,
Զբրկել ջանային՝ յաթոռոյն փառաց,
ԶՅօհան Պատրիարգ՝ սիրեալն ի բազմաց:
- 14 Եւ անդ ընդ նորա՝ զընել ջանային,
Ըղձեարոս Քիւթիւր՝ յոյժ աղմբկալին,
Որ լինէր յետոյ՝ ներհակ գըլխովին,
Զահկեցի Ղազար՝ կաթուղիկօսին:
- 15 Պատճառանք որոյ՝ յայս ինչ կայանայր
Թէ ի նրդովել Յօհան հեռանայր,
Ըղձաղկեդոնիկս եւ Ղեւոնդ սուրբ հայր,
Ոչ հալածեալ զայն, որ զՅետ այնց երթայր:
- 16 Զայս ինչ նոյն Քիւթիւր վաղ իսկ հըռչակեալ,
Մըխեալ էր յուղեղս անձանց ուսմկացեալ,
Որով երկատէր՝ զազգ մեր ամբօխեալ,
Ի միջն որոյ զաղմուկ յարուցեալ:
- 17 Սոյն վատթար խորհուրդ բընաւ չէր հաճոյ,
Իշխանաց Հայոց կոստանդ^օնուպօլսոյ,
Եւ ոչ անձընիւր խոհական մարդոյ,
Այլ՝ միայն խուժ գուժ ուսմկաց ժողովոյ: